

Հարգելի դիմորդ,

Լրացրեք Ձեր անունը, ազգանունը և հայրանունը

ԱՆՈՒՆ

ՀԱՅՐԱՆՈՒՆ

ԱԶԳԱՆՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Եթե ուսումնական հաստատության գնահատման համակարգը կրեդիտային է, խնդրում ենք չօգտագործել տեղեկանքի այս ձևը, այլ ներկայացնել գնահատականները առանձին փաստաթղթով: Փաստաթուղթը պետք է ներառի Ձեր գնահատականները և համապատասխան կրեդիտները, ինչպես նաև Ձեր տարեկան և ընդհանուր միջին որակական գնահատականները:

Դիմորդ

Սույն տեղեկանքը պետք է լրացվի Ձեր ավագ դպրոցի ներկայացուցչի կողմից: Լրացված տեղեկանքը պետք է ներկայացնել Հայաստանի ամերիկյան համալսարանի բակալավրի կրթական ծրագրի դիմում-հայտի հետ համատեղ: Ոչ պատշաճ կամ թերի լրացված տեղեկանքները չեն ընդունվում: **Առանց միջին որակական գնահատականների կամ չստորագրված և չկնքված տեղեկանքները նույնպես համարվում են թերի և չեն ընդունվում:**

Ավագ դպրոցի ներկայացուցիչ

Վերը նշված անձը դիմում է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) բակալավրի կրթական ծրագրին: ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակը պահանջում է, որ ավագ դպրոցի գնահատականները ներկայացվեն ծրագրի ընդունելության դիմում-հայտի հետ համատեղ:

Խնդրում ենք լրացնել այս տեղեկանքի 2-րդ էջը և նշել 10, 11 և 12-րդ դասարանների համար ավագ դպրոցի կրթական ծրագրով նախատեսված և ուսումնասիրված առարկաների անվանումներն ու աշակերտի կողմից ստացված համապատասխան գնահատականները: Տեղեկանքը կարող եք լրացնել **հայերենով կամ անգլերենով:** Եթե տեղեկանքը լրացնելու պահին տվյալ ուսումնական տարվա համար չկան որոշ (կամ բոլոր) առարկաների վերջնական գնահատականները, խնդրում ենք տրամադրել ընթացիկ գնահատականները:

Տեղեկանքի 2-րդ էջի ստորին հատվածում, որտեղ նշված է **Տարեկան միջին որակական գնահատական (Տարեկան ՄՈԳ)**, խնդրում ենք լրացնել յուրաքանչյուր տարվա համար աշակերտի միջին տարեկան գնահատականը: Տարեկան ՄՈԳ-ը հաշվելու համար անհրաժեշտ է գումարել բոլոր առարկաներից ստացված վերջնական տարեկան գնահատականները և բաժանել առարկաների քանակի վրա (պարզ միջին թվաբանական): **Ընդհանուր միջին որակական գնահատականը (Ընդհանուր ՄՈԳ)** հաշվարկվում է տարեկան **ՄՈԳ-երի** պարզ միջին թվաբանականով:

Տեղեկանքը պետք է ստորագրված լինի ավագ դպրոցի տնօրենի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից, ինչպես նաև կնքված լինի դպրոցի կնիքով:

Ցանկացած հարցերի դեպքում կարող եք զանգահարել Հայաստանի ամերիկյան համալսարանի ընդունելության գրասենյակ 060 69 40 40 հեռախոսահամարով:

